ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 83-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հ Հ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝
Որոշում եմ.

1.2021թ.սեպտեմբերի 18-ը հայտարարել համայնքային շաբաթօրյակի օր և կազմակերպել աղբահանություն,սանիտարական մաքրման,ինչպես նաև համայնքի բնակավայրերի մաքրման աշխատանքներ:
2.Հանձնարարել համայնքի կազմի մեջ գտնվող բնակավայրերի վարչական ղեկավարներին,ՀՈԱԿ-ների տնօրեններին և բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝անկախ սեփականության ձևից.
1/Բնակավայրերի հասարակական վայրերում,հիմնարկ- ձեռնարկներում, ավտոճանապարհների և երկաթգծի/եթե այդպիսին կա/ հարակից տարածքներում, բնակավայրերի կենտրոններում կատարել սանիտարական մաքրման աշխատանքներ՝ տարվա ընթացքում կուտակված աղբից, մոլախոտերից մաքրել շրջակա միջավայրը,
2/ բնակավայրերի հասարակական վայրերում,հիմնարկ- ձեռնարկներում, ավտոճանապարհների և երկաթգծի հարակից տարածքներում պահպանել կանաչ տարածքները և, հնարավորության դեպքում, կատարել ծառատունկ,
3/ շաբաթօրյակի օրը պահպանել աղբատար ավտոմեքենայի անխափան աշխատանքը, կազմակերպել աղբահեռացում:
3. Այդ աշխատանքներին ներգրավել նաև համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին, դպրոցի աշակերտներին, մանկավարժներին և համայնքի բնակչությանը:
4.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալի,<<Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրենի և վարչական ղեկավարների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 14
ք.Թումանյան